

ինչ<sup>1)</sup> և Լէօն անապարեր է ինքն ալ այդ կարծիքին յանդելու :

Ընթերցողը շուտով պիտի տեսնայ թէ Անգլիական մրցակցութիւնը Հայոց դէմ եւ նաեւ Ռուսիոյ եւ Թուրքիոյ Անգլիական Ընկերութեանց միջեւ ստացաւ շատ սուր հանդամանք, որուն միջոցին Անգլիացիները անգամ մըն ալ ամէն միջոց անխտիր գործածեցին, նոյնիսկ սեւացրէքի քաղաքականութիւնը կիրարկեցին Հայոց դէմ :

\* \* \*

Անկարելի պիտի ըլլար այս սահմանափակ էջերուն մէջ ամփոփել Անգլիական, Թուրքիոյ եւ Ռուսիոյ ընկերութեանց գործունէութեան եւ պայքարներուն պատմութիւնը : Ոչ ալ կարելի է ինձ հոս տալ Հայ ընդհանուր առեւտուրին պատմութիւնը եւ գործունէութիւնը այս շրջանին, սակայն խիստ համառօտ ամփոփումը, պարզապէս յիշատակներ թարմացնելու նպատակով հոս աւելորդ չեմ սեպեր տալ :

Բրիտանական հովանաւորութեան տակ, պաշտպանուած փարլամէնթի մասնաւոր օրէնքներով եւ պետական մենաշնորհներով, կազմուեցաւ Ռուսիոյ Բրիտանական ընկերութիւնը, ինչպէս կազմուած էր Արեւելեան Հնդկացը, որոնց ներկայացուցիչները արդէն ժե դարուն սկիզբը Սպահան հաստատուած եւ նոյնիսկ Հայոց գերեզմանատունը թաղուած կը գտնենք, եւ Թուրքիոյ Բրիտանական ընկերութիւնը : Վերջնոյս ներկայացուցիչները հաստատուած էին Չմիւռնիս, Հալէպ եւ Կ. Պոլիս :

Այս ընկերութիւնները, ըլլալով իրարմէ անկախ, բնականաբար, իրարու դէմ ալ կը պայքարէին, երբ իրենց շահը այդպէս պահանջէր : Անոնք իրենց գործած երկիրներուն մէջ ունէին իրենց յատուկ պետական եւայլն թոյլտուութիւններ, մինչ Հայերը, հակառակ Թուրքիոյ կամ Պարսկաստանի հպատակ ըլլալուն, շատ աւելի մաքս կը վճարէին, քան թէ այն օտար ընկերութիւնները :

Տուրքերու այդ դրութիւնը ըստ կամս էր, ենթակայ տեղական մանր իշխանաւորներու կամայականութեանց : Օրինակ, J. B. Tavernier կը վկայէ թէ՝ «Բոլոր Հայ քրիստոնեա-

ները, որոնք Պարսից թագաւորին հպատակ էին, Աֆրոն-Գարահիսարէ անցնելու ատեն պէտք է հոն վճարեն անցքի տուրք մը, որմէ ազատ չէին նկատուեր, եթէ նոյնիսկ նախապէս ատրկա վճարած ըլլային Կարնոյ մէջ կամ այլուր» : 1) Իսկ Կարնոյ մէջ «Պարսկաստանէն արտածուած մետաքսին համար կը վճարուի 24 դրաուն 800 փաունտ կշռող ուղտի բեռի մը համար :» 2)

Ինչպէս ըսի, դրութիւնը միշտ այդպէս չէր, այլ յաճախ տեղական կառավարական անգամներու փոփոխութեանց հետ մաքսային պայմաններն ալ կը փոխուէին : John Theveno կը վկայէ, որ Չմիւռնիոյ մէջ «Հայերը մետաքսի համար ամենէն աւելի մաքս կը վճարեն» : 3)

Օտար ընկերութիւնները, վայելելով իրենց պատկան պետութեանց պաշտպանութիւնը եւ պէտք եղած տեղն ալ դիմելով կաշառատուութեանց, մեծ մասամբ զերծ կը մնային տեղական բնոյթ ունեցող կեղեքումներէ :

Ժե դարուն Անգլիացի ներկայացուցիչ մը, G. F. Abbot, որ Կ. Պոլիս գտնուած է, կը վկայէ .

«Անգլիացիները իրենց առանձնաշնորհումներուն պատճառաւ ստիպուած էին մետաքսի համար միայն երեք առ հարիւր արտածման մաքս մը վճարել : Սակայն, Թուրքերը, խարդախութենէ զգուշանելու համար, որուն մէջ օտարները կ'անցնէին բնիկները — կը նախընտրէին այս տուրքը գանձել բնիկ վաճառորդներէն, որ իր կարգին օտար գընորդին հաշւոյն կ'անցնէր ապրանքներուն հետ նաեւ գանձուած մաքսի ընկալադիրները : Այսպէս էր եղած հաստատուած սովորութիւնը աւելի քան երեսուն տարի՝ առանց օրէնքին տառը փոխելու : Եւ այս առիթը գործածեց Գարա Մուսթաֆա (Փաշան) : Յանկարծ մեր վաճառականները կանչուեցան եւ անոնցմէ պահանջուեցաւ վերջի հինգ տարուան ընթացքին ի-

1) էջ 38 :  
2) էջ 9 :  
3) Collection of Voyages... Harris. Vol. II. էջ 825, Ա. սիւնակ :